

ՆՈՐԱՀԱՅՏ ԳՐՔԵՐ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ՊՐԱԿ Ա.

(ՀԱԳ հրատարակություններ)



2018 թ. տարեվերջին Հայաստանի ազգային գրադարանը ընթերցողի սեղանին դրեց «Նորահայտ գրքեր և պարբերականներ» գրքի Ա. պրակը<sup>1</sup>: Այն իր տեսակի մեջ եզակի է և նախադեպը չունեցող: Կազմված է հինգ բաժնից:

1. Գրքեր /ներառված են մինչև 1930 թ. հրատարակությունները/:
2. Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր / ներառված են մինչև 1850 թ. հրատարակությունները/:
3. Պարբերականներ / ներառված են մինչև 1970 թ. հրատարակությունները/:
4. Հայկական հետք:
5. Հավելված:

Յուրաքանչյուր բաժնի ներսում նյութերի մատենագիտական նկարագրությունները դասավորված են ըստ տպագրության տարեթվերի՝ աճման կարգով: Գրքերն ու պարբերականները նկարագրված են մատենագիտական արդի պահանջներին համապատասխան՝ հապավումների, վերնագրերի և օգտագործված գրականության օժանդակ ցանկերով: Նկարագրված բոլոր գրքերի ու պարբերականների թվային տարբերակները հասանելի են «Հայ գիրք»<sup>2</sup>, «Հայկական շարունակական հրատարակություններ»<sup>3</sup> շտեմարաններից:

Մինչ այժմ կազմված հայ գրքի և հայ մամուլի համահավաք մատենագիտական ցանկերի հիմնական նպատակը եղել է առավել ամբողջական ներկայացնել հայ

<sup>1</sup> Նորահայտ գրքեր և պարբերականների: Պրակ Ա /Կազմ.՝ Ստ. Պետոյան, Ռ. Ալեքսանյան; Խմբ.՝ Տ. Զարգարյան, Հ. Ղազարյան, Մ. Գրիգորյան; Առաջաբ.՝ Տ. Զարգարյան; Հայաստանի ազգային գրադարան.- Եր.: «Գիրք» հրատ., 2018.- 128 էջ, նկար, քարտեզ, շարվ.՝ 16,5X21,5 սմ:

<sup>2</sup> <http://haygirk.nla.am/>

<sup>3</sup> <http://tert.nla.am/>

տպագրության համապատասխան շրջանի պատկերը: Չնայած կատարված մանրակրկիտ աշխատանքին՝ մատենագիտական համահավաք ցանկերից տարբեր պատճառներով դուրս են մնացել հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրքեր ու պարբերականների, որոնք էլ կազմել են ներկա հրատարակության բովանդակությունը: Եթե տվյալ գիրքը առկա է Հայաստանի ազգային գրադարանի պահոցներում, ապա նշվել է, թե որ թվականին է այն մուտք գործել գրադարան: Եթե առկա չէ, ապա նշվել է, թե որ գրադարանում այն կա: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրքերն ու պարբերականները համահավաք ցանկերում չեն ներառվել հիմնականում ֆիզիկական բացակայության պատճառով. դրանք գրադարան մուտք են գործել մատենագիտական համապատասխան հատորի տպագրությունից հետո: Որոշ անուններ գտնվել են էլեկտրոնային աճուրդներից, որոշ նյութեր նվիրել են գրադարանի բարեկամները՝ անհատներ և գործընկեր գրադարաններ: ՍտՔԳ նշումով բոլոր գրքերը հայտնաբերել են ՀԱԳ աշխատակիցներ Աստղիկ Վարդանյանն ու Անի Սարգսյանը 2017 թ. Ստամբուլի քաղաքային գրադարանի հայերեն գրքի հավաքածուի հետ աշխատելիս, իսկ ՍՊԱԳ նշումով բոլոր գրքերի թվային տարբերակները Հայաստանի ազգային գրադարանին է տրամադրել Եգիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ, հասարակական գործիչ Սուրեն Պայրամեանը: Մի շարք գրքեր ու պարբերականներ եղել են կազմակից և վրիպել են մատենագետների ուշադրությունից: Որոշ գրքեր հայտնաբերվել են տարբեր թվային գրադարանների տրամադրած պաշարներից:

Սույն հրատարակության մեջ առանձնակի ուշադրության է արժանի «Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր» բաժինը, ուր ներառված են մինչև 1850 թ. տպագրված և հայերեն կամ հայատառ հատվածներ պարունակող այլալեզու գրքերը: Նախկինում մատենագետները հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրել աշխարհի տարբեր գրադարանները, մինչդեռ այսօր բոլոր գրադարանները թվայնացրել են իրենց պաշարները, ինչն էլ հետազոտություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ աշխարհի տարբեր գրադարաններում պահպանվում են մինչև 1850 թ. տպագրված բազմաթիվ օտարալեզու գրքեր, որոնք պարունակում են հայերեն Տերունական աղոթքը, այբուբենը՝ լատինատառ տառադարձումով, հայերեն բառեր կամ նախադասություններ: Այդ գրքերի մատենագիտական նկարագրությունները ներառվեցին այս պրակի մեջ, իսկ թվային տարբերակները հասանելի են «Հայ գիրք» շտեմարանից:

«Հայադարան» բաժնում ներկայացված են Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների, տպագրության պատմության մասին տեղեկություններ պարունակող մի շարք օտարալեզու գրքեր, որոնք աղբյուրագիտական արժեք ունեն պատմաբանասիրական ուսումնասիրությունների համար:

Վերջին տասնամյակի ընթացքում կատարված մատենագիտական որոնումների արդյունքում բազմաթիվ հայերեն հնատիպ գրքեր են հայտնաբերվել աշխարհի տարբեր գրադարաններում: Այդ գրքերի մատենագիտական նկարագրությունները թեպետ ներառվել են «Հայ գիրքը 1512-1800 թթ.» (Երևան, 1988) ուսումնասիրության մեջ, սակայն մշակութային այդ հաստատությունների անունները չեն հիշատակվել որպես հայերեն հնատիպ գրքերի պահպանության օջախներ: Ուստի առանձին հավելվածի տեսքով ներկայացված են մի շարք այդպիսի գրադարաններ՝ հայերեն հնատիպ գրքերի համապատասխան ցանկերով:

Մատենագիտական որոնումների արդյունքում մեր կողմից հայտնաբերվել 1646 թ. տպագրված «Նոր Կտակարանի» տիտղոսաթերթը, 1793 թ. Նոր Ջուղայում տպագրված մեկ հնատիպ գիրք, 83 անուն հայերեն և հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտական նկարագրություն, որոնցից 24 անունը՝ 1801-1850 թթ., 26 անունը՝ 1851-1900 թթ., 21 անունը՝ 1901-1920 թթ., 12 անունը՝ 1921-1930 թթ.: Ներառվել է նաև 14 անուն հայերեն հատված պարունակող գրքերի և 9 անուն պարբերականի մատենագիտական նկարագրություն:

Կատարված աշխատանքը ցույց է տալիս, որ հայ գրքի ու մամուլի տպագրության պատմության մեջ կան բազմաթիվ անհայտ կողմեր, որոնց ուսումնասիրությունը նոր մատենագիտական ցանկերի հիմք կարող է հանդիսանալ:

### **ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ**

*Հայաստանի ազգային գրադարան  
Մատենագիտության և գրադարանագիտության բաժին*